Հավելված N 2
ՀՀ վարչապետի N 289 - Ա
որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

«ԿԱՆԱՆՑ ԴԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կարգավորվում են Երևանում կայանալիք «Կանանց դերը ժողովրդավարության, խաղաղության և անվտանգության խթանման գործում» խորագրով միջազգային գագաթնաժողովի (այսուհետ՝ գագաթնաժողով) կազմակերպման աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործունեության կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն աշխատակարգով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3. Հանձնաժողովի նպատակներն են՝

1) Երևանում անցկացվելիք գագաթնաժողովի կազմակերպական և նախապատրաստական աշխատանքների համակարգումը.

2) գագաթնաժողովի շրջանակներում կազմակերպվող միջոցառումների ծրագրի մշակումը և հաստատումը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

4. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են յուրաքանչյուր ամիս առնվազն 1 անգամ:

5. Հանձնաժողովի նիստերը հրավիրում և վարում է հանձնաժողովի նախագահը:

6. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նիստը վարում է հանձնաժողովի անդամներից մեկը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

7. Նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի կազմի կեսից ավելին:

8. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նիստը վարողի ձայնը վճռորոշ է:

9. Հանձնաժողովի ընդունած որոշման հետ համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը կարող է ներկայացնել իր գրավոր հատուկ կարծիքը, որը կցվում է որոշմանը:

10. Հանձնաժողովի անդամները հանձնաժողովի քարտուղարի կողմից տեղեկացվում են հանձնաժողովի նիստի անցկացման վայրի, օրվա, ժամի և նիստի օրակարգի մասին՝ նիստի անցկացման օրվանից առնվազն 3 օր առաջ:

11. Հանձնաժողովի նիստերին, ըստ անհրաժեշտության և նպատակահարմարության, կարող են հրավիրվել այլ պետական պաշտոնյաներ, գիտական հաստատության ներկայացուցիչներ, համապատասխան մասնագետներ, այդ թվում՝ միջազգային փորձագետներ, զանգվածային լրատվության միջոցների, մասնավոր ընկերությունների և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԸ

12. Հանձնաժողովի նախագահը՝

1) համակարգում է հանձնաժողովի գործունեությունը և ապահովում որոշումների կատարման նկատմամբ վերահսկողությունը.

2) հրավիրում և վարում է նիստերը.

3) համակարգում է հանձնաժողովի աշխատանքները.

4) ստորագրում է նիստերի արձանագրությունները և հանձնաժողովի գործունեության հետ կապված այլ փաստաթղթեր.

5) իր բացակայության դեպքում հանձնաժողովի անդամներից մեկին հանձնարարում է վարել նիստը.

6) հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում նիստի օրակարգը:

13. Հանձնաժողովի անդամն իրավունք ունի՝

1) նիստից առնվազն 3 օր առաջ ներկայացնելու գրավոր հարցեր՝ հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկելու համար.

2) ներկայացնելու առաջարկություններ հանձնաժողովի գործունեության, նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

3) ծանոթանալու հանձնաժողովի նիստերի արձանագրություններին:

14. Հանձնաժողովի անդամը պարտավոր է՝

1) մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին.

2) իրականացնել սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

15. Հանձնաժողովի անդամը՝ նիստին իր մասնակցության անհնարինության մասին նախօրոք պետք է գրավոր տեղեկացնի հանձնաժողովի նախագահին:

16. Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի բնականոն գործունեության ապահովմանն աջակցելու նպատակով՝

1) նախապատրաստում է նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերն ու դրանք տրամադրում հանձնաժողովի անդամներին.

2) կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

3) ապահովում է հանձնաժողովի նիստի որոշումների նախագծերի կազմումը.

4) վարում է հանձնաժողովի աշխատանքների հետ կապված գործավարությունը.

5) գրանցում է հանձնաժողովի անդամների ներկայացրած գրավոր հատուկ կարծիքները.

6) կազմակերպում է հանձնաժողովի որոշումների տրամադրումը հանձնաժողովի անդամներին և համապատասխան կազմակերպություններին.

7) իրականացնում է խորհրդակցությունների հրավիրման համար անհրաժեշտ կազմակերպչական գործառույթներ:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

17. Հանձնաժողովի աշխատանքները համարվում են ավարտված, և նրա լիազորությունները դադարում են գագաթնաժողովի ավարտով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ